Նիլ Եորթեան պողոտայի մը վրայ, էտկար էլըն Փոյի դարէն մնացած եւ անոր պատմը ւածքներուն մթնոլորտը փոխանցող քառա-յարկ բնակարան մը կը հանդիսանայ թատերա-բեմը մղածաւանջային գիշերուան մը: Ինքնին հարստութեան մը արժէքը ունեցող այս բնա-կարանը օժտուած է «Փէնիք ռուս» ժապաւէ-նին անուըն տուող «վախազդող» սեցեակով: Որեւէ «Ներխուժում»-ի պարագային ապահով պատասխան ծառայող անքափանցելի սեցեակը շինուած է եօթը թոն շաղախէ եւ պողպատէ, ունի օդի փոփոխութեան եւ արտաքին աշխար-հին հետ հաղորդակցելու իր գերադասական միջոցները եւ գնահատելու կացութիւններ դի-մագրաւելու անհրաժեշտ սարքեր: Սակայն, հեզակաւորեւ, «Փէնիք ռուս» ժամանող անկոչ հիւրերուն թիրախը առաջին օրէն կը գտնուի նոյ-նիքն պողպատապատ թաքստոցին մէջ:

Նիլ Եորթի երկնաքերներուն միջեւ եւ վախ-դոցներուն վրայ նախքէ Եորթ, «Փէնիք ռուս»-ի քամերան էջը կը կատարէ Մէկ Ալթմա-նի եւ անոր շաքարախտաւոր աղջնակին՝ Սա-ռային կեանքին մէջ: Մէկ նոր մուտնալուծ-ւած մայր մըն է, որ այդ տարածուն եւ բազ-մայարկ տունը կը գէտ իբրեւ հիւրանոց փոխ-վրէժ՝ զինք լքած ամուսինին: Ան շուրջ պտտող քամերան կը պարզէ խոնոցվոր գորշ մոխ-րագոյն պատկեր մը՝ նման հերոսուհիին հո-գեվիճակին, որ դիպաշարին յառաջացումով եւ երեք գողերու մուտքով կը ստանայ տարբեր գարգացումներ:

Բեմադրիչ Տէյվիթ Ֆիլմըրի («Ֆայթ քլաք», «Սեւըն») այս նորագոյն թրիլլերը իր յաջողու-թեան կարեւոր մասը կը պարտի Մէկ Ալթմա-նի գեղեր ստանձնած Ճիւտի Ֆոսթըրի: Երկու-անգամ լաւագոյն դերասանուհիի Օսքարով պարգևատրուած Ֆոսթըր լաւագոյն կը յա-ջողի ամբամտութեամբ իր սեփական տան ամէնէն ապահով անկիւնը բանտարկուած կնոջ կեր-պարը, որ ամէն գնով կը յաջողի դուրս գալ թաքստոցէն՝ իր հիւանդ գաւազին դեղ ապա-հովելու համար: Բնագոյն վախը յաղթահա-րելով՝ հերոսուհին կը յաջողի հետեւիլ բանա-կանութեան: Այսպիսի տիպարի մը մարմնաւո-րումը տարիներէ ի վեր յատկանշական է Ճիւ-տի Ֆոսթըրի համար: Միւս կողմէ, իր առաջին քայլերը նետող դերասանուհի Քրիսթըն Սթիլուըթի մարմնաւորած տանամանայ Սառա-յին կերպարը, իր վեհական խոնոքածքով եւ «տղայական» յատկանշներով, արդարացի-րէն կը ներկայանայ իբրեւ ամէն գնով յաջո-ղելու ձգտող մօր մը գաւազին: Ինչ կը վերա-բերի երեք գողերուն (Ֆոսթըր Ուիթլէյքըր, Տուայթ Եոսթըրմ եւ Ճերրո Լեթո), ապա անոնք գաւազնակաւորեւ գիրար հակասող կերպար-ներ են, որոնք, իրենց կարգին, տան տարբեր անկիւնները գետնուրած քամերաներուն միջո-ցով դարձած են Մէկի եւ Սառայի բանտար-կեալները: Բարեբախտաբար ժապաւէնին ցնցիչ տեսարանները երբեմն կը մեղմանան գողերուն անհարկութիւններուն արժեք հի-մըրով: Ժապաւէնին սրվէնսի մթնոլորտը, սա-տիեանաբար զարգանալով, անոր երկրորդ կի-տուն կը վերածուի ծայրայեղ բրտութեան տե-սարաններու:

Հիշքորեան սրվէնս ժապաւէններ յիշեցը-նող տեսարաններով հարուստ «Փէնիք ռուս» շարժապատկերի աշխարհին մէջ մեծ ընդունե-լութիւն ունեցող նմանօրինակ ժապաւէններու մակարդակին բանի մը աստիճան կը բարձրա-նայ շնորհիւ իր կարողութեամբ թեքնիքներուն եւ, մանաւանդ, Ճիւտի Ֆոսթըրի տպաւորիչ խաղարկութեան, որով սակայն աւելի եւս կը շեշտուի այլ դերասաններու խաղարկութեան միջակ որակը:

# Միսուսի Քուշտի

## ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԵՐՏՈՂ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ

«ՏԸ ՆԻՒ ԵՈՐԸ ԹԱՅԱՉ» Կ'ԱՐԺԵՒՈՐԸ ԱՍԵՐԻԿԱՏԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ԳՈՒՐԳԵՆ ՅՈՎԱԵՓԵԱՆԻ ԱԴԱՆԴ՝ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՎ ԶԱՐԴԵՐՈՒ ՅՈՒՅԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԸԱՅՈՒ ՏԻՊԱՐԸ, ՈՐՈՒՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՆԵՐԸ Կ'ԱՆՍԱՐԱՑՆԵՆ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՍԸ ՊԱՏՈՒԹԻՒՆԸ

Կէս դար շարունակ օրական քանի մը անգամ կարճ «Թատրոններ» տեղի կ'ունենային Պրոնքսի մէջ, ուր կ'ըմբռնուէր շէնքի մը երկրորդ յարկը լուսանկարչատան վերածուած էր: Կոկիկ հագած մարդ մը, հալածական աչքերով գլուխը կը թաքցնէր թաւշեայ սեւ լաթին տակ: Ան կը դիտէր լուսանկարչական գործիքին մէջէն եւ ընտանիքի մը պատկերը կը նայէր իրեն: Լուսանկարիչն ու նկարուողները լուռ կը դիտէին զիրար: Ապա նիհար ձեռք մը կը սեղմէր կաւի գոյնով ձգախէժէ գունդը՝ անմահացնելով Պրոնքսի մէջ բնակող այլ ընտանիք մը:

Ճերմակ չափկով եւ փողկապով այս մարդը՝ Գուրգէն Յովսէփեան, 1920ական տարիներու կէսերէն մինչեւ 1970ական տարիներու վերջերը, չուրջ կէս դար իշխած է իրեւ Պրոնքսի առաջնակարգ լուսանկարիչներէն մէկը:

Միսուսը Քըրք, ինչպէս ծանօթ էր ան, ինքզինք երբեք արուեստագետ չէր համարեր: Լուսանկարչու թիւնը իրեն համար «ապրուստի միջոց էր», կ'ըսէ անոր աղջիկը՝ Միմի վանկ Օլսէն, որ իր քով պահած է իր հօր գործերը: Սակայն ապրուստ ապահովելու առընթեր, այս հայ գաղղուստ ձգած է յատկանշական աւանդ մը՝ ստեղծելով հազարաւոր պատկերներ, որոնք կ'ընծանեն ոսկեղարու մը գլխանակարը, ինչպէս պիտի նկարագրէին ազատ աչքերով անցեալին նայող մարդիկ:

Անոր ֆուտբոլիստ առասպելական սիրտը կրնար Քոնտրասի մը, 4-5 մղոն երկարութեամբ ծառուղիի մը, ուր իրենց երգները կը փորձէին իրականացնել քաղաքին արուարձաններէն հոն հասնող հրեաներն ու իրլանտացիները: 1930ական տարիներու կէսերուն ծառուղիի եւ անոր շրջապատը աշխարհագրական վայր մը ըլլալէ աւելի իմացական կշիռ մը ունէին:

Այս աշխարհը իր ծաղկումը կ'ապրէր, երբ Միսուսը Քըրք յայտնուեցաւ հոն: Իրմէ առաջ բազմաթիւ հայերու նման, ան հոն հասաւ սակաւաթիւ ինչքերով, սակայն՝ հոգեբանական ցնցումներու բեռով մը, որ կը պարունակէր իր աւերուած հայրենիքէն փախուստի մղձաւանջին յիշողութիւնները:

Ան պատանեկութենէ երիտասարդութիւն անցնելու սեմին էր 1913ին, երբ ասպատակող թուրքեր բնաջնջած են անոր ծննդավայր Նարբեքը, սպաննած են հայրը, իսկ մայրը, քոյրն ու երկու եղբայրները անգթօրէն քշած են դէպի մահ, կիզիչ անապատին մէջ: Գուրգէն Ափերայրած է, պարզապէս որովհետեւ կովկասի վրայով խոյս տուած է դէպի Ռուսիա: Իր կեանքին վերջերուն իր աղջկան ուղղուած ձայների մը մէջ ան սահմակեցուցիչ յատկութեամբ կը նկարագրէ ջարդերը՝ «Մարմիններ կը հալէին մոմի պէս՝ տաք արեւուն տակ ծփալով գետէն վար»:

Հազարաւոր մղոններ հեռու, Մասաչուսէթսի մէջ անոր գործիկներէն մէկը՝ Ղազար Մելիքեան արդէն լուսանկարչատուն մը հիմնած էր: Գուրգէն Յովսէփեան 1920ին Ամերիկա հասնելով՝ իր կողմը գտաւ հոն: 1927ին, երբ նոր մտնուեցաւ էր Ռուսգարացի աղջկան մը հետ, իր սեփական լուսանկարչատունը հիմնեց քաղաքին անուանի վաճառատուններուն կողքին:

Այդ տարիներուն լուսանկարչատունները հիմնական դեր ունէին իրենց միջավայրի կեանքին մէջ: Առեւտրական լուսանկարչութիւնը աստղերու ծնունդ կու տար եւ հարուստ էր իրեն յատուկ աւանդութիւններով եւ գեղագիտութեամբ: Իսկ թաղամասի մը բնակիչներուն ծառայող լուսանկարչատուններուն դերը գլխաւորաբար ընկերային էր. անիկայն կենսական վայրն էր, ուր ընտանիքներ կ'արձանագրէին իրենց կեանքին մեծ ու փոքր անցուղարձերը:

«Լուսանկարիչը իր արուեստանոցին մէջ կը պատկերէր մարդիկը այնպէս, ինչպէս անոնք կ'ուզէին պահել իրենց կեանքին արձանագրութիւնը, այնպէս՝ ինչպէս կ'ուզէին, որ ուրիշներ տեսնէին զիրենք ու յիշէին, - կը գրէ Պոնի Եռչլուսը: - Անոնք լուսանկարիչին կը վստահէին իրենց աւանդը ստեղծելու: Լուսանկարիչը կը պատմէր պարզ մարդոց պատմութիւնը»:

Ասիկա կատարելապէս կը բնութագրէ Միսուսը Քըրքի տիպարը: Տարիներու ընթացքին ան արձանագրած է ազգային եւ կրօնական իւրաքանչիւր ոգեկոչում, մկրտութենէ մինչեւ հարսանիք: Անոր խմբանկարները կը պատկերեն ընտանիքներու եղափոխութիւնը օրօրօցնէ գերեզման:

Յունիսին իրենց ձեռքին մէջ վկայականներ սեղմած եւ ճառագայթող դէմքով շրջանաւարտներ կ'ուղղուէին դէպի Միսուսը Քըրքի լուսանկարչատունը: Բ. Աշխարհամարտին զինուորներու եւ նաւագներու փառապանքը կը փորձերու եւ նաւագներու փառապանքը կը փորձային անոր քով իրենց լուսանկարները տալու համար իրենց ծնողներուն՝ նախքան պատերազմի երթալը: Արտողութիւններ պատկերող լուսանկարներու կողքին կ'երեւին վայելուցիչ կիներ, ապագայի հասնական դերասանուհիներ, որոնք ոսպնեակի հնարքով մը շղարչային ծփանք մը կ'արտացոլեն, ինչպէս երազի մէջ:

Այս լուսանկարները թերթատելու ընթացքին շատուց անհետացած աշխարհ մը կը վերակենդանանայ: Կարելի է նոյնիսկ լսել անոնց մէջ պատկերուած քնարական երգերն ու

սրինգները, շոյել պարսկական ոչխարի բուրդով հիւսուած վերարկուները:

Շուտով 4 հոգիէ բաղկացած ընտանիք մը կը բնակէր Միսուսը Քըրքի 4 սենեակնոց յարկարաժինին մէջ: Սակայն ընտանեկան կեանքը թաքնուած էր ներքին սենեակներուն եւ խոհանոցին մէջ, իսկ մնացեալ երկու սենեակները յատկացուած էին լուսանկարչատան: Օլսէնի ծնողները կը քնանային շարժական բազկաթոռի մը վրայ, որ գիշերը կը բացուէր եւ կը ծառայէր իրեւ անկողին: Մասուկները կը քնանային փոքր ննջարանի մը մէջ, բացուող թիկնաթոռներու վրայ: Փոքր հանդերձարան մը վերածուած էր մուտ սենեակի, իսկ բաղնիքին մէջ ֆիլմեր կախուած էին զոտարանին վրայ, եւ նոր տպուած լուսանկարներ կը չորանային անձեռոցներու երկայնքին:

Երբ յաճախող մը կու գար, Միսուսը Քըրք գայն կ'առաջնորդէր դէպի մեղմ գոյններով հովուերգական բնապատկեր մը կամ մետաքսի վրայ փարթած գոյներով պատկերուած տեսարան մը, որ կը ծածկէր ամբողջ պատ մը եւ իրբեւ խորապատկեր կը ծառայէր: Ընտանիք մը կը խմբուէր կաղնիի ծառի մը տակ կամ կը կանգնէր հին գրասեղանի մը անասունի թաթեր յիշեցնող ոտքերուն առջեւ:

Երբ ամէն ոք իր տեղը կը գրաւէր, Միսուսը Քըրք դարակէն կը հանդէր թաւշեայ շալ մը, չոր վարդերու փունջներ, որթաթղթեր մը, փողկապ մը, գնդակ մը կամ պուպրիկ մը՝ շէտաւորելու համար լուսանկարուող անձին տեսքը կամ լուսանկարուելու առիթը:

Կիրակի օրերը հարկեր կու գային չքախուձներով եւ ամէն ոք կը խմէր անոնց կենացը: Վերջին լուսանկարէն ետք Միսուսը Քըրք հարսնեւորներուն կ'ընկերակցէր դէպի Պրոնքսի պարասրահները կամ ճաշարանները: Աւելի ուշ, երբ այլեւս հանդերձութիւն կը տիրէր լուսանկարչատան մէջ, ան կը քաշուէր իր մուտ սենեակը, ուր տասնամեակներ շարունակ պղնձէ հին փոքրիկ կշիռքով մը կը չա-

փէր իր քիմիական նիւթերը եւ կը տպէր իր լաւագոյն լուսանկարները: Մինչեւ գունաւոր լուսանկարներու յայտնութիւնը՝ ան ձեռքով կը գունաւորէր իր բոլոր լուսանկարները, առամակարկիտներու շուրջ բամպակ փաթթեցուած եւ զանոնք յատուկ իւղաներկերու մէջ թաթխելով. աշխատանք մը, որ ի վերջոյ ստանձնեց անոր աղջիկը, 11 տարեկանին:

«Թերեւս, որովհետեւ ան գոյներու նկատմամբ հետաքրքրութիւն չունէր եւ ամէն ինչ սեւ ու ճերմակ կը տեսնէր», կ'ըսէ Օլսէն: Կամ թերեւս բացատրութիւնը աւելի բարդ է, կ'աւելցնէ ան: Երբ կը դիտենք Միսուսը Քըրքի նիհար դիմաստուները շուրթերէն կախ ծիսախոտով, կրնանք չմտածել, թէ ոքքան տառապած էր անոր հոգին: Իր բազմաթիւ հայրենակիցներուն պէս ան ցմահ հալածուած էր իր մանկութեան չար ոգիներով:

Նոյն այս ահաւոր անցեալը կը բացատրէ, թէ ինչո՞ւ անոր տան սառնարանը միշտ լցուած էր խաղողի ոլորուած տերեւներով, սեւ ձիթապտուղով, ոչխարի միսով պատրաստուած խմորեղէնով եւ հայկական համադամ այլ ճաշերով: Թերեւս նոյն պատճառով է, որ ան երբեք ձայնասփռու չէր ունկնդրեր աշխատելու ընթացքին, թէեւ Միսուսը ամէն կը լսուէր թաղամասին բոլոր անկիւններէն:

«Տուէն կ'երթար միայն լուսանկարելու համար, - կ'ըսէ անոր աղջիկը՝ Այնթան երկար թափառած էր իր պատանեկութեան, որ կ'ուզէր պարզապէս ապահով ապրիլ իր փոքր ընտանիքին հետ»:

Սակայն նոյնիսկ ընտանիքն ու բարեկամները չէին կրնար վստեղ անոր մղձաւանջները: Հետեւաբար ան կը փորձէր ինքզինք մոռնալ հարբելով: 1950ական տարիներու վերջերուն ան այնքան կը խմէր, որ դարձած էր նախարարակ, ո՞չ ֆիզիքապէս, այլ՝ խօսքով: Ամէն գիշեր գինովնայէ ետք կը քնանար՝ յաջորդ օրը դարձեալ ապրելու համար նոյն ձեւով, եւ անցեալի փորձառութիւնները աւելի մօտ

ապրուած իրականութիւններ կը դառնային:

Թաղամասէն շատ հեռու ընկերային եւ տնտեսական բարդ փոփոխութիւններ տեղի կ'ունենանային: Պրոնքսի հարաւային շրջաններէն սահմանափակ եկամուտով սեւամորթներ եւ փորթօ ուրիշներ սկսան հաստատուիլ քաղաքին հիւսիսային շրջաններուն մէջ, ուր գրեթէ ամբողջութեամբ սպիտակամորթ բնակչութիւն մը արմատ արձակած էր: Մեծ մասամբ թմբեցուցիչի գործածութեան պատճառով գործուած ոճիրները բազմացան, կարգ մը թաղամասերու մէջ խուճկութիւնները ցեղապաշտական բացառաբար բնոյթ ստացան: 1966ին, երբ շուրջ 16 հազար նոր յարկարաժիններ կառուցուեցան Պրոնքսի հիւսիսը, նոր դարպաս մը բացուեցաւ եկուորներու համար: Հրեաներն ու իրլանտացիները ամէնէն առաջ հեռացան այլափոխուող քաղաքէն: Օլսէն 1980ին իր ծնողները տեղափոխեց Պրոքսիին, ուր հաստատուած էին իր բարեկամները: Հայրը այդ ժամանակ 80 տարեկան էր եւ մահացաւ նոյն տարին:

Եթէ Միսուսը Քըրքի ուրուականը այսօր վերադառնար իր ապրած հին թաղամասը, նոր աշխարհ մը պիտի գտնէր հոն:

Պրոնքսի հին ընկերայինը չքացած են: Վերապրած են միայն Միսուսը Քըրքի հիանալի լուսանկարները: Անոր աղջիկը, որ կը գունաւորէր սեւ ու ճերմակ լուսանկարները եւ հետագային գեղանկարչութիւն ուսած էր Տեսուղական Արուեստներու Դպրոցին մէջ, իր հօր պէս դիմանկարիչ է. ան կը գծէ պարզ մարդիկ՝ իրենց բնակարաններուն մէջ: Մինչ ան կ'աշխատի, Միսուսը Քըրքի կաղնիի փայտէ գրասեղանին ետին փոշին եւ յուշերը աստիճանաբար կը ծածկեն անոր պղնձէ փոքրիկ կշիռքը, լուսանկարներու տուփերը եւ ապակիէ ցեկաթիկները, զորս իր տունը փոխադրած է Օլսէն:

(ՅԱՊԱԻՌՈՒԱՍ)

## ԵԹՈՎՊԻԱՅԻՔ ՀՐԱԺԵՇՏ ԿՈՒ ՏԱՆ ՏՈՔԹ. ԱՐՇԱԻՐ ԹԵՐԶԵԱՆԻ

ԵԹՈՎՊԻՈՅ ԱՍԵՆԵՆ ԱԿԱՍԱԻՐ ԸԱՅՈ ՄԱՏԱՍՄ ՄԱՅԻՍ ԿԵՏԻՐՈՒՆ ԵՒ ԹԱՂՈՒԵՍՒ ԱՐԷԱՅԱՎԱՅԵԼ ՇՈՒՔՈՎ: «ԿՈՂԻԿ» ԼՍՏՈՒ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԸՆԴԱՐԱՎԱԾ Ե ԿԱՐՊԻ ՔՈՐԱՅԱՆԻ ՄԱՐԳՐՈՒԹԻՒՆ. ՍՏՈՒԵՒ՝ ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆԸ

Տասնեակ հազարաւոր եթովպիացիներ իրենց վերջին յարգանքը մատուցեցին մարդասէր բարեբար տղթթ. Արշաւիր Թերզեանի, որ սեփականատէրն է Եթովպիոյ մայրաքաղաք Ասիս Ապպայայի ամէնէն հսկայական բժշկագիտական տարալուծարանին: Երկրի մը մէջ, ուր մարդիկ շատ մեծ կարեւորութիւն կ'ընծայեն յուղարկաւորութեան, իրբեւ կրօնական արարողութիւն եւ ընկերային անխուսափելի պարտաւորութիւն, տղթթ. Արշաւիր Թերզեանի թաղամաս օրը Եթովպիոյ նորագոյն պատմութեան մէջ ցարդ չտեսնուած բազմութիւններ ողողեցին Ասիս Ապպայայի փողոցները, որոնք կ'առաջնորդէին դէպի Հայ առաքելական Ս. Գեորգ եկեղեցին՝ հրաժեշտ տալու համար 80ամեայ հայուն:

Տղթթ. Թերզեան արտասովոր մարդ մըն էր: Ան անձնական բարեկամութիւն ունէր այժմ մահացած Հայլէ Սելասի կայսեր հետ եւ յաճախ պայտ կը կանչուէր, երբ կայսրը կը հիւանդանոցէր: Ան թագաւորական ընտանիքին, Եթովպիոյ պատրիարքին, կրօնաւորներուն եւ պատասխանատու գինուորականներու ընտանիքներուն բժիշկն էր եւ անոնց դեղ հայթայթողը: Սակայն այն անձը, որ կը ինքնամէր թագաւորական ընտանիքը, աւելի քան 50 տարի նաեւ բժշկական ձրի ծառայութիւն եւ դեղ կը մատուցէր բազմաթիւ աղքատ հիւանդներու: Անոր պաշտօնեանները նոյն գործին համար վճարուած միջին աշխատավարձէն երեք անգամ աւելին կը ստանային: Ան ծանօթ էր իրբեւ «Աղքատներուն մարդը», որ միայն չափազանց ազնիւ անձերու վերապահուած եթովպիական կոչում մըն էր: Վերջաւորութեան աղքատները հազարներով հրաժեշտ տուին իրենց հերոսին:

Տղթթ. Թերզեան նաեւ ծանօթ էր իր քաղութեամբ: Ան կ'ըսէր եւ կ'ընէր այն, ինչ որ ձիւղ կը նկատէր: Այնպիսի երկրի մը մէջ, ուր ընդդիմադիր կուսակցութիւնները անհանդուրժողութեան կը հանդիպին, ան հիմնադիր անդամներէն էր «Օլ Ամհարա» կուսակցութեան եւ նիւթապէս կ'օժանդակէր անոր: Սերտ բարեկամ էր կուսակցութեան ղեկավարին եւ օր մը ձեռքակալուած ու հարցաքննուած էր այժմու կառավարութեան կողմէ՝ կուսակցութեան հետ իր կապին պատճառով: Սակայն քանի մը ժամ ետք ազատ արձակուած էր, որովհետեւ աւելի օգտակար նկատուած էր բանտէն դուրս, աղքատներուն բարօրութեան համար աղքատութիւնը յաւելեալ բեռ մըն էր, զոր կառավարութիւնը չէր ուզեր կրել:

Տղթթ. Թերզեանի յուղարկաւորութեան մասնակցած կնոջ մը համայն, անոր թաղամաս ներկայ գտնուած եթովպիացիներուն թիւը ամէնէն մեծն էր, որ ինք տեսած է Եթովպիոյ նորագոյն պատմութեան մէջ: Անիկա կը գերազանցէր նոյնիսկ 1997ին մահացած Եթով:

պիոյ գահաժառանգ իշխան Ասֆաու Վոսէն Հայլէ Սելասի թաղումին մասնակցողներուն թիւը: Եթովպիոյ պատրիարքը եւ երեք կրօնաւորներ կատարեցին թաղման արարողութիւնը: Ներկայ էին պետական եւ ընդդիմադիր կուսակցութիւններու ներկայացուցիչներ, պաշտօնական անձնաւորութիւններ, զեսպաններ, անուանի առեւտրականներ, հայ համայնքին վերջին մնացորդները եւ մեծ մասամբ քաղաքին աղքատ բնակիչները: «Պետական թաղումի մը տպաւորութիւնը կը ձգէր», կ'ըսէ Եթովպիա բնակող հայ մը:

Ժամանակին 1500 հայեր կը բնակէին Եթովպիոյ մէջ, ուր ծաղկած է Ափրիկէի հնագոյն քաղաքակրթութիւններէն մէկը: Հայերն ու եթովպիացիները կը բաժնեն նոյն կրօնը: Եթովպիոյ մէջ հայերը ունին 500 տարուան պատմութիւն: Կարգ մը վանքերէ յայտնաբերուած ձեռագրերը մարտմասնորէն կը պատկերեն հայերուն ազդեցիկ դերը երկրին կրօնական կառույցին մէջ:

Ժամանակակից պատմութեան մէջ հայերը դէպի Եթովպիա գաղթած են անցեալ դարասերներին՝ խոյս տալով հալածանքներէ եւ անոնց յաջորդած ցեղասպանութիւնէն: 1920ական տարիներուն կայսրը անձամբ որդեգրած է 40 հայ որբեր, որոնք բերուած են Եթովպիոյ մէջ հայերէն անոնք կը կազմէին «Արպա Լընոյ» անունով երաժշտական խումբ մը: Ափրիկեան այս երկիրը գալէ ետք որբերը իրենց ղեկավարին հետ ստեղծած են եթովպիական ազգային քայլերգը եւ կատարած են ժամանակ, երբ անոնք պետական բանալի աշխատանքներ կը վարէին իրբեւ ղեկավար եւ գիտելիք փոխանցող պաշտօնեայ կառույցումին: Կարծաւորութեան մարդերու մէջ: Շուրջ քառորդ դար պետական գանձատան քարտուղարը հայ մըն էր. ան Հայլէ Սելասի կայսեր գլխաւոր ղեկավարն էր: Հայերը նաեւ աղքատներու ներկայութիւն էին ճարտարապետութեան, բժշկագիտութեան, երաժշտութեան, քաղաքապետական սպասարկութիւններու, գինուորակցութեան եւ եթովպիական դիւանակալութեան կառույցին ստեղծման մէջ:

Սակայն հայերը ամէնէն աւելի տիրական ներկայութիւն եղած են Եթովպիոյ առեւտրական մարզին մէջ: Անոնք բարգաւաճած են աղքատութեամբ ճանչցուած այս երկրին մէջ: Տիրապետած են կաշիի գործին, կոշիկի արտադրութեան, տպագրութեան, ոսկերչութեան, ինքնաշարժի առուծախի, սուրճի արտածումի, ոգելից ըմպելիներու ներածումի, դերձակաւաններու, ծանր ճարտարապետներու, ալիւրի ջաղացներու, ուսուլիքի պատրաստութեան համար գործածուող իւղի գտումի, հացահատիկի մշակումի, կալուածներու արժեւորու-

մի եւ կառուցումի մարզերուն մէջ: Երկար ժամանակ Ասիս Ապպայայի «փիացային» (խտաբէշնով՝ հրապարակ) գլխաւոր շուկային մէջ վաճառատուներուն մեծամասնութիւնը կը պատկանէր հայ առեւտրականներուն: Իր փառքը գազաթնակէտին միայն 1500 հոգի հաշուող այս փոքր, բայց ազդեցիկ գաղութը ունէր կազմակերպուած ինքնապարտութիւն, ջրէնէրկութեամբ ընտրուած ներկայացուցիչներ, կիներէ բաղկացած աշխատաւորական երկու համագործակցութիւններ, նախակրթարան, եկեղեցի եւ ակումբ: Նախակրթարանը աւարտելէ ետք մանուկներ կ'ուղարկուէին Եթովպիական վերնախաւին յատուկ կրթական հաստատութիւնները, մինչ անոնց ծնողները կը վայելէին բարձրագոյն կենսամակարդակ, ինչ որ ցամաքամասին վրայ միայն սակաւթիւ հաւաքականութիւններու յատուկ էր:

Եթովպիոյ համայնավար վարչակարգը 1974ին Մենկիսթու Հայլէ Մարիամի գլխաւորութեամբ վերջ դրաւ այս «երազային աշխարհին» պետականացնելով գաղութին գործարանները, առեւտրի մարզերը, բնակարանները եւ ամբողջ հարստութիւնը, ներառեալ դպրոցը: Նման փորձառութիւններ արձանագրուած էին այլ գաղութներու մէջ, եւ Եթովպիան բացառութիւն չէր: Հայերը շուտով սկսան գաղթել դէպի Միացեալ Նահանգներ, Քանադա եւ Աւստրալիա:

Քիչերը համարակցեան Եթովպիա մնալ համայնավար վարչակարգին հաստատումէն ետք: Այդ քաղերէն էր տղթթ. Արշաւիր Թերզեան: Ներկայիս հայ գաղութը կը հաշուէ շուրջ 100 հոգի: Անիկա ունի նուիրեալ ղեկավարութիւն, գաղթը, ակումբ եւ եկեղեցի, ուր ամէն կիրակի պատարագ կը մատուցուի: Բազմաթիւ եթովպիացիներ տակաւին կը յիշեն իրենց մանկութեան բարեկամները եւ այլ երկիրներու մէջ հաստատուած եթովպիահայեր խոր անձկութեամբ կը պատմեն Ապիսիոյ մէջ անցուցած իրեն





ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱԴՐ ԱԲԵԼԻ ԽՈՐԱՅՆԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ

ԹՐԲԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԿԸ ԾՐԱԳՐԷ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՋՈՒՐԵՐՈՒՄ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ ԸՆԴԱՐՁԱԿԵԼ

ՆԻԿՈՍԻԱ, 30 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրք կիպրական կողմը կը պատրաստուի ճանաչում չունեցող իր «պետութեան» շրջանային ջուրերու սահմանները ընդարձակել՝ քայլով մը, որ կրնայ վնասել ՄԱԿի Կորակցութեամբ կիպրոսը վերամիացնելու ճիշդութիւնը:

ԹՈՒՐԵՒԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԴԱՄԱԼՈՒԹՈՒԹԵԱՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ ՄՏԱԿԱԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԽՈՐԱՆԱՆ

ԱՆԳԱՐԱ, 30 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ հիւանդ վարչապետը Տինգ շաբթի օր հրաժարած է Ազգային Առաջնորդութեան Խորհուրդին բանալի մէկ ժողովին մասնակցելէ՝ աւելի եւս խորացնելով քաղաքական անդամաւորութեան մը գծով մարտահրաշխանութիւնը:

Պիւլիսի Էճեօրի մէկ խորհրդակցանք յայտնած է, թէ բժիշկները անոր թելադրած են չմասնակցելու ժողովին:

Ա. Ա. Խորհուրդը, որ բարձրաստիճանի անխաբարներէ եւ բանակային հրամանատարներէ բաղկացած մարմին մըն է, յերմիջօրէին ժողով մը գումարած է, քննարկելու համար շարժ կերպով լուծելի հարցեր, որոնք վերականգնելու կառավարական ընկերակցութիւնը:

Վարական ընկերակցութեան մէջ իր աջակողմեան գործակիցը՝ Ազգայնական Գործի Կուսակցութիւնը քննադատած է՝ առանց սաւակայն անուանելու գայն: Անկի կը մերժէ մարդկային իրաւանք բարեկարգումները, որոնց միջոցով արեւելքը յէտք է ձեռնարկել թուրքիա՝ հասնելու համար Ե. Միութեան չափանիշներուն, որոյնչպիսի կարենայ անդամակցութեան բանակցութիւններուն սկսիլ:

«Ե. Միութիւնը կարենոր առիթ մըն է՝ մեզ փրկելու համար անշարժութենէ», ըսած է Երվմագ՝ շեշտելով, որ անհրաժեշտ է «այսօր իսկ» որոշումներ կայացնել:

ԼԻԲԱՆԱՆ – ԻՐԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ...

Եւրոպայի ընդգծեց, որ Իրանի նախագահը կը ծրագրէ Լիբանան պաշտօնակապ յայցելութիւն տալ:

Նախագահ Լաիուտի այցելեց նաեւ բրիտանացի բարձրաստիճանի պաշտօնատարներուն մէկ պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին Բրիտանիոյ խորհրդարանի անդամ Հուկո Սուալըր եւ Լորտերու Խորհուրդի անդամ Լորտ Մայքըլ Սեւիլ: Քննարկուեցան միջազգային կարգադրումները եւ Լիբանան – Բրիտանիա յարաբերութիւններու բարելաման հեռանկարները:

Սուալըր նախագահ Լաիուտի յայտնեց, որ Բրիտանիոյ խորհրդարանը խորհրդարանական յանձնարարութեամբ մը պիտի յայտարարէ Լիբանանի հետ երկկողմանի յարաբերութիւնները բարելաւելու եւ ամրապնդելու նպատակով:

Նաեւ քննարկուի ապրիլի դարձաւ Լիբանանի տնտեսական վիճակը եւ բրիտանացի գործատերերու հետաքրքրութիւնը: Լիբանանի մէջ ներդրումներ կատարելու գծով:

Նախագահ Լաիուտի այցելեց բանակի հրամանատար Կոր. Միշէլ Սէյման, որ նախագահին հետ քննարկեց երկրին ապահովական վիճակը եւ բանակին վերաբերող հարցեր:

Նախագահ Լաիուտի ընդունեց նաեւ Աւստրալիոյ մէջ յոյն ուղղափառներու առաջնորդ Փոլ Սալիպան, Ասորիներու Լիկայի մէկ պատուիրակութիւնը, ինչպէս նաեւ «Հերըլտ Թրիպիուս» եւ «Տէյլի Սթար» օրաթերթերու խմբագրապետեր Տէյվիս Իկնաթիոս եւ Ժամիլ Մըրուուէն:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԹԱՓ ԿՈՒ ՏԱՅ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ...

Իսրայէլեան բանակին սպայակոյտի պետը ըսաւ, որ Արաֆատը չաքտորելը պատմական սխալ մըն է:

Իսրայէլեան բանակին հրամանատարը յիշեցաւ յայտարարութիւնը կատարած է ապահովութեան հարցերու սեղմ դահլիճի նիստին, որ կայացած էր Չորեքշաբթի օր: Շարուն, որ իր կարգին յաճախ կը յանդատէ Արաֆատը, յանդիմանեց զօր. Շարուլ Մոֆազը ապահովութեան հարցերու ժողովին քաղաքական հարցեր արծարած ըլլալուն համար, յայտնեցին քաղաքական ազդեցութիւնը: Սակայն յիշեցաւ վէճն ու պահեստիները շրջանները վերագրուելու մասին տարակարծութիւնները ցոյց կու տան, թէ Շարուն ճնշումի կ'ենթարկուի աւելի խիստ կերպով հակադրութեան ընդհանրական գործողութիւններուն:

Միւս կողմէ, պահեստիներն արմատական երկու շարժումներ, որոնք կը մերժեն Իսրայէլի հետ հողի փոխարէն իրազդուութեան համաձայնութիւնները, յայտարարեցին, որ մերժած են Արաֆատի առաջարկը՝ մաս կազմելու պահեստիներն ընդհանրական գործողութեան մը: Էֆ. Փէ. Էլ. Փէ. եւ Էֆ. Տէ. Էլ. Փէ. հաստատ կը մնան Իսրայէլի դէմ զինեալ պայքարը շարունակելու սկզբունքին վրայ: Անոնք աւելցուցին, որ կառավարութեան անդամակցելու հրաւերը ներկայացուած է Արաֆատի կողմէ, Ռամադանի մէջ, ու Չորեքշաբթի գիշեր ան անշարժութեան երկու շարժումները ներկայացնող պատերազմի շրջաններուն հետ: Էֆ. Փէ. Էլ. Փէ. ի մէջ բանեբեր ըսաւ, որ իրենց պատուիրակուցութիւնը մերժած է, պահեստները, որ ամէն բանի առաջ խորհրդարանին ընտրութիւններ տեղի ունենան:

Միւս կողմէ, պահեստիներն արմատական երկու շարժումներ, որոնք կը մերժեն Իսրայէլի հետ հողի փոխարէն իրազդուութեան համաձայնութիւնները, յայտարարեցին, որ մերժած են Արաֆատի առաջարկը՝ մաս կազմելու պահեստիներն ընդհանրական գործողութեան մը: Էֆ. Փէ. Էլ. Փէ. եւ Էֆ. Տէ. Էլ. Փէ. հաստատ կը մնան Իսրայէլի դէմ զինեալ պայքարը շարունակելու սկզբունքին վրայ: Անոնք աւելցուցին, որ կառավարութեան անդամակցելու հրաւերը ներկայացուած է Արաֆատի կողմէ, Ռամադանի մէջ, ու Չորեքշաբթի գիշեր ան անշարժութեան երկու շարժումները ներկայացնող պատերազմի շրջաններուն հետ: Էֆ. Փէ. Էլ. Փէ. ի մէջ բանեբեր ըսաւ, որ իրենց պատուիրակուցութիւնը մերժած է, պահեստները, որ ամէն բանի առաջ խորհրդարանին ընտրութիւններ տեղի ունենան:

Միւս կողմէ, Մուսարաբի խորհրդատու Ուսամա Պազ այսօր Իսրայէլ պիտի այցելէ ճանդիպումներ ունենալու համար Շարունի եւ արտաւերակ Ուրիլիմ Պըրնզի հետ, որ իր կարգին շրջապատի մը ձեռնարկած էր՝ համակարգելու քաղաքական բանակցութիւններուն նպատակը է թափ տալ վերսկսելու ճիգերը, ինչպէս նաեւ՝ պահեստիներն իշխանութեան բարեկարգումի ծրագրերը:

Միւս կողմէ, Մուսարաբի խորհրդատու Ուսամա Պազ այսօր Իսրայէլ պիտի այցելէ ճանդիպումներ ունենալու համար Շարունի եւ արտաւերակ Ուրիլիմ Պըրնզի հետ, որ իր կարգին շրջապատի մը ձեռնարկած էր՝ համակարգելու քաղաքական բանակցութիւններուն նպատակը է թափ տալ վերսկսելու ճիգերը, ինչպէս նաեւ՝ պահեստիներն իշխանութեան բարեկարգումի ծրագրերը:

**NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L.**  
ՆԱՐԱ ԹՐԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ա.Պ.Ը.  
(Սեփականատը՝ Վաիտ Մանուշակեան)  
ՎԻԵՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆԵԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՄՊԱՍՈՒԿՆԵՐՈՒ ԱՊԱՆՈՎՈՒՄ  
• Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:  
• Մեր ճշգրտագին՝ անկեղծութիւն, ապահովութիւն,  
• Մասնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:  
Պառնիք, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

ՍՈՓՐԱՆՕ ԻՉԱՊԵԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆԻ...

Չարունակուած 3րդ Էջէն  
Ջարկիս եւ ծրագրեր արդէն իսկ կ'իրականանայ այսօր: Ինծի համար մեծ պատիւ է բեմ ելլել նման համբաւի տէր հայագրի երգչուհի մը հետ: Պէտք է ըսել, որ այս ծրագրին իրագործման մէջ մեծ դերակատարութիւն ունեցաւ Լիբանանի մէջ Բանաստեղծութեան համաձայնութիւնը եւ այս առիթով մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք: Բանաստեղծութեան համաձայնութեան, պետական նուագախումբին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան այս համատեղ աջակցութեան շնորհիւ է, որ այսօր գեղեցիկ երաժշտական համերգ մը կը խոստանանք պարգեւել լիբանանցի երաժշտասէրին:

ԷՖ. ՊԻ. ԱՅ. ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ...

Չարունակուած Ա. Էջէն  
տուեալներ, կանխարգիլելու համար Սեպտեմբեր 11ի յարձակումները:  
Մուլըր, որ Էֆ. Պի. Այ.ի տնօրէնի պաշտօնը ստանձնած է Սեպտեմբեր 11էն շարք մը առաջ, հարցազոյցի մը մէջ յայտնած է, թէ կարելի չէր կանխարգիլել յարձակումները, որովհետեւ «դաւր արդէն սարքուած էր արտասահմանի մէջ: 19 օրահինգերը Մ. Նահանգներ մտած են, անոնք որեւէ կապ չեն հաստատած մարդոց հետ, որոնք մեր գիտելիք, թէ «Հայիտա» ինտելեկտներ են եւ օդանւեր անուանակալու համար գործածած են միջոց մը, որուն մասին միայնակ չէինք մտածած՝ տուփ կտրող սարքեր»:  
Ըստ պաշտօնակաճ նորագոյն թիւերուն, Նիւ Եորքի, Փենսիլվանիոյ եւ Փենսիլվանիոյ մէջ Սեպտեմբեր 11ին զոհուածներու թիւը 3056 է:  
Պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտ Չորեքշաբթի օր յայտնած է, որ ահաբեկչութեան դէմ պատերազմը վերջ չէ գտած:  
(ՌՈՅԹԸՐԸ)

**VALSE International Cosmetics**  
Armen Haroutunian & Co.  
DORA - Magie Al-Hajj Str. - Tel: 01-265449  
Fax: 01-324617 - P.O.Box: 90-150 Beirut-Lebanon

«Ա.Ջ.Գ.Ա.Կ».- Ի՞նչ է համերգին յայտագիրը: Ի՞նչ պիտի ստեղծագործութիւններ պիտի հնչեն այսօր:  
Յ. Ֆ.- Յայտագիրը պիտի ընդգրկէ օֆերաներու հանրայայտ էջեր: Նուագախումբը պիտի նուագէ օֆերաներու երկու նախերգանքներ: Ապա, Լիբանանի Պետական երաժշտանոցի, «Հորովի» երգչախումբէն կազմուած բազմադրամ երգչախումբը պիտի կատարէ խմբերգներ՝ Վերտի «Նապոլեո» եւ «Դրուպատուր» օֆերաներէն խմբերգներ: Անշուշտ գլխաւոր բաժինը պիտի ըլլայ Իգայէլ Պայրազտարեանի տարբեր դերերգերու մեկնաբանումը:  
«Ա.Ջ.Գ.Ա.Կ».- Արդէն իրականութիւն է Լիբանանի ազգային նուագախումբը: Ըստ ձեզի, զեղարուեստական ի՞նչ վիճակ կը պարզէ այսօր անիկա եւ ի՞նչ ծրագրեր ունիք յառաջիկային:  
Յ. Ֆ.- Յղենիս 14ին նուագախումբին հետ կու տամ այս տարուան վերջին համերգը: Իսկ կը կարծեմ, որ նուագախումբի վիճակը շատ լաւ է: Սրահները միշտ լցուն են եւ ժողովուրդը բարձրօրէն կը գնահատէ եւ կը քաջալերէ նուագախումբին բոլոր համերգները:

ONE SECOND IS ENOUGH...  
Արկածը Կը Պահար Երկարութեան Մը Մէջ...  
...BUT WE USE THEM ALL.  
...ԻՍԿ ՄԵՆ ԵՆՐԱՅ ԵՆ ԱՍԿ ԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ.  
ԱՖԻԼ AFHIL  
Աֆիլ-Կ Ընդ, Բ. Ցարկ, 760. Ե. Ցարկ. (01) 262231-242556-242557  
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557